քի վերայ և երիզուած կարմիր կտորով։ Պարանոցի տակ երևում է զարդարուն ներքնազգեստը։ Գլխարկը իր ձևով նման 8բ-ի վերին գերանի փարչը ձեռքին բռնած ֆիգուրի գլխարկին (պատկ. 1)։ Մազերը սև են և յետևից կապուած ժապաւէնի երկու ծայրերն իջած են կրծքի վերայ, ինչպէս լուսանցքի նախընթաց ֆիգուրների վերայ տեսանք։

Ներքևի գերանի վերայ նկարուած է ծաղկած և կիսաբաց կոկոններով նռնենի, ոճաւորած (*)։ Ներքևի լուսանցքում, անմիջապէս խորանի տակ փոքր երկաթագրով «Տր. Ա՛ծ ողորմեա Մարգարէին, գրչի եւ նկարչի. եւ Սահակա ստացողի եւ ծնաւղաց իւրեանց ամէն»։

ւանդութիւնների հետ են կապուած, նկարչի տաղանդն ու կարողութիւնը բնորոշելու համար առանձին նշանակութիւն ունին 16բ եւ 17ա մանրանկարները։ Առաջինը՝ 24×18½ սմ. մեծութեամբ, Յիսուսի մուտքն է Երուսաղէմ, բայց ոչ շարլոնական ձեւակերպութեամբ, այլ ինքնուրոյն ստեղծագործութեամբ (պատկեր 3)։ Երուսաղէմը եւ տաճարը պատկերաւորած է զմբեթաղարդ, երկյարկանի, բարձր շէնքով, պատուած ատամնաւոր պարսպով և մեծ դարպասով, գլխին վանդակաղարդ մի պատշգամբ։ Դրան բացուածքը քառանկիւնի է, կամարաձև ճակատով, կամարակալ քարի վերայ հպիւ նկատելի կերպով գրուած. «Եմ. քաղաք»։ Դրան, ինչպէս և բացուածքի վերին ճակատը ատամնաւոր զարդ ունին։ Պարսպի ներսից՝ վեր է բարձրանում կրկնայարկ շէնքը, գլխին ազատ սիւների վերայ հանգչող գմբեթով, թմբուկը բոլորակ, իսկ վեղարը կողաւոր. գմբեթի ծայրի բոլորակ գնդի վերայ հաստատուած է քառաթև սակեղօծ խաչ։



(պատկեր 2)

Ե.

Խորաններից աւելի, որոնց ձեւակերպութիւնն այսպէս թէ այնպէս հնագոյն ա-

(*) Լուսանցքի զարդերի եւ ֆիգուրների մանրամասնութիւնը տե՛ս եւ պատկ. 2, միջին շարքը վերից վար։